



Համայնքների ֆինանսիստների միավորում
Communities Finance Officers Association



«Հանրային մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» ծրագիր
“Civic Engagement in Local Governance” Program

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Գիրք 5

ՏԱՐԵԿԱՆ ԻՆՊԵՔՍ 2020

2018

2019

2020

4.30

+0.50

+0.07

ԵՐԵՎԱՆ | 2021



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԻՆԴԵՔՍ (ՏԻՏԻ), ՀԱՅԱՍՏԱՆ (2020թ.)

Գիրք 5

**Մշակվել է ԱՄՆ ՄԶԳ «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում
«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
փորձագիտական խմբի կողմից՝
տեխ. գիտ. թեկնածու Վահրամ Շահբազյանի
խմբագրությամբ**

Երևան 2021

ՀՏԴ 352(042.3)
ԳՄԴ 67.401
S 300

*Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի
Ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:
Այսպես արտահայտված տեսակետները միմիային
հեղինակներին են և պարտադիր չէ, որ
արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

*Սույն գիրքը հեղինակները նվիրում են
**2020թ. արցախյան 44-օրյա պայտերազմում
զոհվածների և անհետ կորածների հիշատակին:***

**Հայաստանի տեղական ինքնակառավարման 2020թ. տարեկան ինդեքսը
(ՏԻՏԻ-ն) գնահատող փորձագիտական խումբ՝**

Տեղական ինքնակառավարման փորձագետներ՝

Վահան Մովսիսյան (ՀՖՄ նախագահ)
Աբրահամ Արտաշեսյան (ՀՖՄ փոխնախագահ)
Վահրամ Շահբազյան (ՀՖՄ փորձագիտական խմբի ղեկավար)
Նարինե Ալեքսանյան (անկախ փորձագետ)
Դավիթ Մարգարյան (ՀՖՄ փորձագետ)
Քնարիկ Այվազովա (ՀՖՄ փորձագետ)
Լևոն Թումանյան (ՀՖՄ փորձագետ)
Աննա Ղորուխյան (ՀՖՄ փորձագետ)
Կարեն Հովհաննեսյան (ՀՖՄ փորձագետ)

**Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ),
S 300 Հայաստան (2020թ.), Գիրք 5 / Խմբ.՝ Վահրամ Շահբազյանի. - Եր.:
Ասողիկ, 2021. - 48 էջ:**

ՀՏԴ 352(042.3)
ԳՄԴ 67.401

ISBN 978-9939-50-486-5

© Համայնքների ֆինանսիստների միավորում

Բովանդակություն

Հապավումների ցանկ	4
Ներածություն	5
ՀՀ ՏՏՏԻ գնահատումը 2020 թվականի համար	6
ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրելիության ապահովումը 2020 թվականին.....	8
ՀՀ 2020թ. ՏՏՏԻ հաշվարկման արդյունքները և դրանց համառոտ վերլուծությունը.....	8
Ամփոփում	11
Հղումներ	12
Աղյուսակներ	13
Աղյուսակ 1. ՏՏՏԻ գործառույթներն ու ցուցիչներն՝ ըստ ՏԻ բնագավառների.....	13
Աղյուսակ 2. ՏՏՏԻ ցուցիչների համապատասխանության ստուգումը տեղա- կան մակարդակում նորարարության և պատշաճ կառավարման 12 սկզբունքներին.....	13
Աղյուսակներ 3 - 7. ՏՏՏԻ ցուցիչների գնահատումն՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների.....	14
Աղյուսակ 3ա. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ.....	14
Աղյուսակ 3բ. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ.....	17
Աղյուսակ 4ա. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ.....	20
Աղյուսակ 4բ. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ.....	25
Աղյուսակ 5. Տեղական ժողովրդավարություն.....	29
Աղյուսակ 6. Համայնքի կառավարում.....	33
Աղյուսակ 7. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում	35
Աղյուսակ 8. ՏՏՏԻ ամփոփ հաշվարկն ըստ տեղական ինքնակառավարման բնագավառների, 2018 - 2020թթ.....	42
Հավելված 1. ՏՏՏԻ ցուցիչների գնահատման չափանիշների հիմնավորումները.....	43

Հապավումների ցանկ

ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀամաՏեղ	Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը
ՀԿ	Հասարական կազմակերպություն
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԻՏԻ	Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՑԱ	Ցուցիչի արժեքը
ՑԳ	Ցուցիչի գնահատականը
ԲՄԳ	ՏԻ բնագավառի միջին գնահատականը

Ներածություն

ՏԻ համակարգի վերլուծությունը, մոնիթորինգը և չափելի գնահատումը կարևոր նշանակություն ունեն նրա հետագա զարգացման համար: Միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված է ՏԻ համակարգի մոնիթորինգի և գնահատման իրականացումը ինդեքսավորման (համաթվի հաշվարկման) մեթոդով՝ ՏԻ-անը համակարգային կամ ինստիտուցիոնալ մոտեցմամբ: Ըստ այդմ, յուրաքանչյուր տարի հավաքագրվում և ընդհանրացվում է տվյալ երկրի բոլոր համայնքների և ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ քանակական ու որակական անհրաժեշտ տեղեկատվությունը և, որոշակի մեթոդաբանության կիրառման միջոցով, հաշվարկվում է այդ երկրում ՏԻ տարեկան ինդեքսը (համաթիվը):

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ ՀՀ տեղական 6 կազմակերպությունների համընկերության (ՀՖՄ-ի առաջնորդությամբ) կողմից 2014թ. հոկտեմբերից ի վեր իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում՝ ՀՖՄ-ի և ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից 2017-ին մշակվեց «Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), Հայաստան» մեթոդաբանությունը (2015թ. և 2016թ.) (այսուհետ՝ Մեթոդաբանություն)՝ հիմնվելով այդ բնագավառում միջազգային որոշակի փորձի վրա և այն հնարավորինս տեղայնացնելով ՀՀ ՏԻ համակարգում²:

ՏԻՏԻ հաշվարկումը նպատակ ունի համապարփակ ու չափելի գնահատել ՀՀ ՏԻ համակարգի տարեկան գործունեությունը՝ ՀՀ կառավարությանը, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերին տրամադրելով դրան համապատասխան հավաստի թվային գնահատական:

ՏԻՏԻ հաշվարկումը հիմնվում է ՀՀ ՏԻ բնագավառի տարեկան կտրվածքով համակարգային վերլուծության վրա՝ հիմքեր ստեղծելով համակարգում տարբեր տարիներին կատարված փոփոխությունները վերլուծելու, համեմատելու, համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ մշակելու և պատկան մարմիններին ու հանրությանը ներկայացնելու համար:

ՏԻ համակարգի մոնիթորինգի տարեկան զեկույցների 7 բաժինները պատրաստող ՀՖՄ փորձագիտական խումբը (բաղկացած 7 փորձագետներից), օգտագործելով արդեն եզրափակված տարվան առնչվող տեղեկատվությունը և հիմնվելով վերոնշյալ Մեթոդաբանության վրա, կատարում է ՀՀ ՏԻՏԻ գնահատումը:

ՀՀ 2015-2019թթ. ՏԻՏԻ գնահատման արդյունքները ներկայացված են ՏԻՏԻ նախորդ 4 գրքերում³: Սույն՝ թվով արդեն 5-րդ գրքում ներկայացվում է ՀՀ ՏԻՏԻ

¹ «ՀամաՏեղ» ծրագրի համընկերությունում գործընկեր կազմակերպություններն են՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն (ՀՖՄ), «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն (ՏՀԶԿ), Երևանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն-Հայաստանը (ՀՌԿԿ):

² «Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), Հայաստան», Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, Երևան, 2017, www.cfoa.am

³ ՏԻՏԻ, Հայաստան», Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, Երևան, 2017, www.cfoa.am ՏԻՏԻ, Հայաստան», 2017, Գիրք 2, Երևան, 2018, www.cfoa.am

ՏԻՏԻ, Հայաստան», 2018, Գիրք 3, Երևան, 2019, www.cfoa.am

գնահատումը 2020թ. համար, որի արդյունքները համադրվում և համեմատվում են 2015-2019թթ. ՏԻՏԻ գնահատված արդյունքների հետ՝ ներկայացնելով կատարված փոփոխությունները վերջին 6 տարիների ընթացքում: Համեմատած նախորդ 5 տարիների ՀՀ ՏԻՏԻ գնահատականների հետ (2015թ.՝ 4.4 բալ, 2016թ.՝ 4.3 բալ, 2017թ.՝ 4.4 բալ, 2018թ.՝ 4.3 բալ, 2019թ.՝ 4.8 բալ, 2020թ.-ի համար հաշվարկված ՀՀ ՏԻՏԻ գնահատականը մոտ 0.1 բալով նվազել է 2019թ. ՏԻՏԻ-ից (4.8 բալ)՝ կազմելով 4.7 բալ:

ՀՀ ՏԻՏԻ գնահատումը 2020 թվականի համար

Մեթոդաբանությունում ներկայացված են ՏԻՏԻ գնահատման ընդհանուր սկզբունքները, փորձագիտական գնահատման մեթոդը, հաշվարկման գործընթացը, ինչպես նաև ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրելիության ապահովման սկզբունքը, որոնք ամբողջությամբ պաշտպանվել են նաև 2020թ. ՏԻՏԻ-ի գնահատման ժամանակ:

Համաձայն Մեթոդաբանության, ՏԻՏԻ-ի հաշվարկումն իրենից ներկայացնում է որպես ՀՖՄ փորձագիտական խմբի կողմից հետևյալ հաջորդական քայլերի իրականացման արդյունք՝

- ՏԻ բնագավառների, գործառույթների և ցուցիչների սահմանում (ՀՀ ՏԻՏԻ-ի հաշվարկումը կատարվում է ՏԻ ընդհանրացված 5 բնագավառներում՝ ըստ 20 գործառույթների և 52 ցուցիչների, որոնց ցանկերը բերված են Մեթոդաբանության Աղյուսակ 1-ում⁴),
- գնահատվող ցուցիչների համապատասխանության ստուգում ընտրված սկզբունքներին⁵ (Մեթոդաբանության Աղյուսակ 2, Հավելված 1),

ՏԻՏԻ, Հայաստան», 2019, Գիրք 4, Երևան, 2020, www.cfoa.am

⁴ Որպես ՏԻՏԻ գնահատման հիմնական բնագավառներ, ընտրվել են ՏԻ ընդհանրացված հետևյալ ուղղությունները.

- 1) տեղական ինքնակառավարման բարեփոխումներ,
- 2) համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ,
- 3) տեղական ժողովրդավարություն,
- 4) համայնքի կառավարում,
- 5) համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Ինչպես 2015-2019թթ., այնպես էլ 2020թ. ՏԻՏԻ հաշվարկման ժամանակ Մեթոդաբանությամբ սահմանված 3 գործառույթների («Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավարում)», «Միջազգային աջակցություն» և «Համայնքային այլ ծառայություններ») համար գնահատման ենթակա ցուցիչներ առայժմ չեն սահմանվել՝ պայմանավորված դրանց գծով տեղեկատվության հասանելիության կամ հավաքագրման դժվարությունների հետ, և, հետևաբար, այդ գործառույթների գնահատում այս տարի ևս չի իրականացվել: Սակայն, դրանք թողնվել են ՏԻ տվյալ բնագավառի գործառույթների ցանկում՝ հետագա տարիներին ցուցիչներ սահմանելու և ՏԻՏԻ հաշվարկման մեջ դրանց գնահատականները ևս ներառելու հնարավորությունը չքացառելու նպատակով:

⁵ Որպես այդպիսի սկզբունքներ, Մեթոդաբանությունում ընտրվել են «Տեղական մակարդակում նորարարության և պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները», տես CoE, Committee of Ministers (2008), The Strategy for Innovation and Good Governance at Local Level.

- ցուցիչների գնահատման չափանիշների սահմանում և հիմնավորում⁶ (Մեթոդաբանության Աղյուսակներ 3-7, Հավելված 2),
- ցուցիչների գնահատման՝ տվյալ տարվա բուն գործընթացի կազմակերպում և իրականացում⁷ (Մեթոդաբանության Աղյուսակներ 3-7),
- գնահատված ցուցիչների արժեքների թվաբանական միջինացում՝ ըստ ՏԻ գործառույթների և բնագավառների, և, վերջիններիս միջինացմամբ, տվյալ տարվա ՏԻՏԻ հաշվարկում (Մեթոդաբանության Աղյուսակ 8):

Հարկ է նաև նշել, որ «ՏԻ բարեփոխումներ» բնագավառի «Միջհամայնքային համագործակցություն» գործառույթի «Կամավոր հիմունքներով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը» և «Օրենքով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը» ցուցիչների համար դեռևս վերջնական չեն սահմանվել գնահատման չափանիշներ, քանի որ դրանց սահմանումը մեծապես կախված է ինչպես ՀՀ վարչատարածքային հետագա բարեփոխումներից և հանրային կառավարման համակարգում ապակենտրոնացման սպասվելիք գործընթացներից, այնպես էլ այդ բնագավառում ձևավորված օրենսդրական դաշտի նպատակային կիրարկումից: Չնայած 2018-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը⁸, մինչև 2020-ի ավարտը այդ օրենքով նախատեսված միջհամայնքային միավորումներ դեռևս չեն ձևավորվել:

Քանի որ 2020թ. ՏԻՏԻ գնահատման ժամանակ Մեթոդաբանության Աղյուսակներ 1-ում և 2-ում որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել, դրանք սույն գրքում չեն ներառվել՝ միայն հղում կատարելով Մեթոդաբանությանը:

Մեթոդաբանությամբ սահմանված բոլոր ցուցիչների գնահատման չափանիշները, դրանց հիմնավորումները, մեկնաբանությունները և 2018-2020թթ. գնահատման արդյունքները ներկայացվում են **Աղյուսակներ 3-7-ում**: Ընդ որում, ՏԻՏԻ ցուցիչների գնահատման չափանիշների սանդղակի ամենաբարձր աստիճանի (10=«կատարյալ») ընտրության հիմնավորումները ներկայացվում են սույն գրքի **Հավելված 1-ում** (Մեթոդաբանությունում բերված Հավելված 2-ի հիման վրա):

Ի վերջո, գնահատված ցուցիչների արժեքների թվաբանական միջինացմամբ՝ ըստ ՏԻ բնագավառների, հաշվարկվել է ՀՀ 2020թ. ՏԻՏԻ-ն: Վերջին 3 տարիների (2018-2020թթ.) ՏԻՏԻ գնահատված արդյունքները ամփոփվել, համադրվել և ներկայացվում են Աղյուսակ 8-ում:

⁶ Յուրաքանչյուր ցուցիչի համար սահմանվել և կիրառվել են այդ ցուցիչին բնորոշ գնահատման չափանիշներ, ինչպես նաև յուրաքանչյուր տարի դրանք գնահատելիս տրվում են համապատասխան հիմնավորումներ և մեկնաբանություններ:

⁷ Բոլոր ցուցիչները գնահատվում են 0-10 բալանոց գնահատման սանդղակով՝ կիրառելով ցուցիչների գնահատման չափանիշները:

⁸ «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենք, 07.03.2018թ., ՀՕ-146-Ն

ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրելիության ապահովումը 2020 թվականին

Մեթոդաբանությունում ներկայացված է ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրելիության ապահովման սկզբունքը, որը հնարավորություն է տալիս ՀՀ ՏՆՏԻ հաշվարկման ժամանակ օգտագործված տվյալները և ցուցիչները համեմատել ԵՄ անդամ երկրների համապատասխան տվյալների և ցուցիչների հետ: Ստորև ներկայացվում է այս սկզբունքի կիրառման արդյունքը 2020թ-ի համար:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2020-ին Հայաստանի և ԵՄ անդամ երկրների մեկ շնչի հաշվով անվանական ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) միջինում համապատասխանաբար կազմել են **4,267.5** (2016-ին՝ 3,606.0, 2017-ին՝ 3,936.8, 2018-ին՝ 4,212.1, 2019-ին՝ 4,622.7) **ԱՄՆ դոլար** և **33,927.7** (2016-ին՝ 32,059.0, 2017-ին՝ 33,715.1, 2018-ին՝ 36,531.7, 2019-ին՝ 34,843.3) **ԱՄՆ դոլար**⁹:

2020թ-ի համար մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է ԵՄ անդամ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների միջինի մոտ 12.58 (2016-ին՝ 11.25, 2017-ին՝ 11.68%, 2018-ին՝ 11.53%, 2019-ին՝ 13.27%)՝

$$\frac{\$ 4,267.5 \text{ (ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ)}}{\$ 33,927.7 \text{ (ԵՄ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ)}} \times 100\% = 12.58\%$$

Ընտևաբար, ԵՄ անդամ երկրների ազգային ֆինանսական հաշիվների ցուցանիշները դիտարկելիս, դրանք, ՀՀ համապատասխան ցուցանիշների հետ համադրելի դարձնելու նպատակով, նվազեցվել են մինչև դրանց սկզբնական արժեքների **12.58%-ը**: Այսպիսով միևնույն մակարդակի են բերվել ԵՄ անդամ երկրների և ՀՀ տնտեսական զարգացածության տարբեր մակարդակները՝ տվյալները և սահմանված ցուցիչները հնարավորինս համադրելի դարձնելով ԵՄ անդամ երկրների նույնանուն տվյալների և ցուցիչների հետ:

ՀՀ 2020թ. ՏՆՏԻ հաշվարկման արդյունքները և դրանց համառոտ վերլուծությունը

Նախորդ 6 տարիների՝ 2015-2020թթ. ՏՆՏԻ գնահատման ընդհանրացված արդյունքներն՝ ըստ ՏԻ բնագավառների, ներկայացվում են ստորև աղյուսակում:

⁹ Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM-EU>

**Աղյուսակ. ՏԻՏԻ գնահատման արդյունքները՝ ըստ ՏԻ բնագավառների
(2015-2019թթ.) - մեջտեղով դնել**

Հ/հ	ՏԻ բնագավառը	Ցուցիչների քանակը	2015թ. միջին գնահատ. (0-10 բալ)	2016թ. միջին գնահատ. (0-10 բալ)	2017թ. միջին գնահատ. (0-10 բալ)	2018թ. միջին գնահատ. (0-10 բալ)	2019թ. միջին գնահատ. (0-10 բալ)	2020թ. միջին գնահատ. (0-10 բալ)
1	ՏԻ բարեփոխումներ	10	4.7	4.9	5.0	4.5	4.8	4.7
2	Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ	18	4.1	3.8	3.4	3.5	4.2	3.9
3	Տեղական ժողովրդավարություն	8	3.9	4.0	4.4	4.4	4.9	5.4
4	Համայնքի կառավարում	4	5.8	5.0	5.3	5.0	5.5	5.3
5	Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում	12	3.5	3.8	3.9	4.1	4.6	4.4
	ՏԻ բնագավառների գնահատականների միջինը (ՏԻՏԻ)	52	4.40	4.30	4.40	4.30	4.80	4.73

ՀՀ 2020թ. ՏԻՏԻ գնահատման արդյունքների մանրամասն վերլուծությունը և համեմատությունը 2018-2019թթ. ՏԻՏԻ գնահատման արդյունքների հետ ներկայացված է «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, 2020թ., Գիրք 13» տարեկան զեկույցի 8-րդ բաժնում (www.cfoa.am): Ստորև բերվում է այդ վերլուծության ու համեմատության համառոտ նկարագրությունը և արված հիմնական եզրակացությունները:

«ՏԻ բարեփոխումներ» բնագավառում սահմանված 10 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020թ. միջին գնահատականը կազմել է 4.7 բալ**, որը հավասար է 2015թ. միջին գնահատականին (4.7 բալ), 0.2 բալով զիջում է 2016թ. միջին գնահատականին (4.9 բալ), 0.3 բալով՝ 2017թ. միջին գնահատականին (5.0 բալ), 0.2 բալով գերազանցում է 2018թ. միջին գնահատականին (4.5 բալ) և 0.1 բալով զիջում է 2019թ. միջին գնահատականին (4.8 բալ):

2019-ի նկատմամբ 2020-ին արձանագրված նվազումը պայմանավորված է հիմնականում մեկ հանգամանքով՝ 2020-ին նվազել է միջհամայնքային

համագործակցության կառույցներում ընդգրկված համայնքների տեսակարար կշիռը << համայնքների ընդհանուր թվի մեջ (2019թ.՝ 20.7%, 2020թ.՝ 19.0%) **(տես Աղյուսակներ 3ա և 3բ):**

«Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառում սահմանված 18 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020թ. միջին գնահատականը կազմել է 3.9 բալ,** որը 0.1-0.5 բալով գերազանցում է 2016-2018թթ. միջին գնահատականներին (3.4-3.8 բալ), սակայն 0.2-0.3 բալով զիջում է 2015թ. (4.1 բալ) և 2019թ. (4.2 բալ) միջին գնահատականներին:

2019-ի համեմատ 2020-ին բնագավառի միջին գնահատականի վրա բացասական ազդեցությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ խիստ նվազել են << համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների եկամուտների (101.0%-ից իջնելով 89.7%-ի) և ծախսերի (88.0%-ից իջնելով 72.6%-ի) հանրագումարների փաստացի կատարման տոկոսները հաստատված պլանների նկատմամբ, ինչպես նաև նվազել են << համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը) (33.6%-ից իջնելով 29.6%-ի) և << համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը << համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում (8.0%-ից իջնելով 7.2%-ի) **(տես Աղյուսակներ 4ա և 4բ):**

«Տեղական ժողովրդավարություն» բնագավառում սահմանված 8 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020թ. միջին գնահատականը կազմել է 5.4 բալ,** որը 0.5-1.5 բալով գերազանցում է նախորդ 5 տարիների՝ 2015-2019թթ. միջին գնահատականներին (3.9-4.9 բալ):

2019թ. նկատմամբ 2020թ. միջին գնահատականի էական աճը պայմանավորված է այս բնագավառի մի քանի ցուցիչների գնահատականների նկատելի աճով¹⁰ **(տես Աղյուսակ 5):**

«Համայնքի կառավարում» բնագավառում սահմանված 4 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020թ. միջին գնահատականը կազմել է 5.3 բալ,** որը 0.5 բալով զիջում է 2015թ. միջին գնահատականին (5.8 բալ), 0.2 բալով՝ 2019թ. միջին գնահատականին (5.5 բալ), հավասար է 2017թ. միջին գնահատականին (5.3 բալ), և 0.3 բալով գերազանցում է 2016թ. և 2018թ. միջին գնահատականներին (5.0 բալ):

2019թ. նկատմամբ 2020-ին արձանագրված նվազումը հիմնականում պայմանավորված է մեկ հանգամանքով՝ նկատելիորեն նվազել է տվյալ տարվա ընթացքում վերապատրաստված համայնքային ծառայողների (ներառյալ Երևանի)

¹⁰ Թոփաքային աճել են տվյալ տարում << համայնքների ընդհանուր թվի մեջ այն համայնքների տեսակարար կշիռը (0.6%-ից բարձրանալով 21.7%-ի) և << բնակչության ընդհանուր թվում այն համայնքների բնակիչների ընդհանուր թվի տեսակարար կշիռը (43.0%-ից բարձրանալով 91.3%-ի), որտեղ համայնքի ավագանու ընտրություններն անց են կացվում համամասնական ընտրակարգով, ինչպես նաև աճել են տվյալ տարվա ընթացքում կայացած ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ բնակիչների մասնակցության միջին մակարդակը (48.6%-ից բարձրանալով 56.2%-ի) և պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (79.5%-ից բարձրանալով 81.8%-ի):

տեսակարար կշիռը նրանց ընդհանուր թվի մեջ (19.5%-ից իջնելով 11.4%-ի) (տե՛ս Աղյուսակ 6):

«Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառում սահմանված 12 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020թ. միջին գնահատականը կազմել է 4.4 բալ,** որը 0.3-0.9 բալով գերազանցում է 2015-2018թթ. միջին գնահատականներին (3.5-4.1 բալ) և 0.2 բալով զիջում է 2019թ. միջին գնահատականին (4.6 բալ):

2019թ. նկատմամբ 2020-ին արձանագրված նվազումը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքներով՝ կտրուկ նվազել են աղբահանության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (88.4%-ից իջնելով 69.0%-ի) և ՏԻՄ-երի կողմից ջրամատակարարման ծառայություն ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի մեջ (56.7%-ից իջնելով 38.8%-ի) (**տե՛ս Աղյուսակ 7**):

Այսպիսով, ՏԻ ընդհանրացված 5 բնագավառներում միասին վերցրած՝ սահմանված 52 ցուցիչների գնահատման արդյունքում, **2020-ին ՀՀ ՏԻՏԻ-ն կազմել է 4.7 բալ,** որը զգալիորեն գերազանցում է 2015-2018թթ. ՏԻՏԻ-ներին (2015թ.՝ 4.4 բալ, 2016թ.՝ 4.3 բալ, 2017թ.՝ 4.4 բալ, 2018թ.՝ 4.3 բալ) և մոտ 0.1 բալով զիջում է 2019-ի ՏԻՏԻ-ին (4.8 բալ): 2019թ. նկատմամբ 2020թ. ՏԻՏԻ նվազագույն նվազումը պայմանավորված է ՏԻ ընդհանրացված բոլոր 5 բնագավառներում էլ սահմանված մեկ կամ մի քանի ցուցիչների 2020թ. գնահատականների որոշակի նվազումով (**տե՛ս Աղյուսակ 8**):

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ ՏԻՏԻ-ի ամենամյա գնահատումն ունի ՏԻ համակարգի մոնիթորինգի և ախտորոշման նպատակ՝ հնարավորություն տալով վերհանելու ՀՀ ՏԻ համակարգում առկա խնդիրները և բացերը, դրանք համակարգված կերպով ըմբռնելու և ուղղորդված քաղաքականությամբ դրանց համապատասխան լուծումներ գտնելու միտումով:

ՀՀ ՏԻՏԻ հաշվարկումն արդեն 6 տարիների՝ 2015-2020թթ. համար հնարավորություն է տալիս համեմատել և վերլուծել այդ տարիներին ՀՀ ՏԻ համակարգում կատարված փոփոխությունները և տրված գնահատականները՝ ՏԻ բնագավառի հետագա զարգացումների վերաբերյալ պատկան մարմիններին և շահագրգիռ հանրությանը համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ ներկայացնելու համար:

Հղումներ

1. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.), Գիրք 8, Դ. Թումանյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Վան Արյան, 2016
2. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2016թ.), Գիրք 9, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Վան Արյան, 2017
3. ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս, Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, ՀՖՄ, Երևան, Վան Արյան, 2017
4. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2017թ.), Գիրք 10, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2018
5. ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ, Հայաստան, 2017, Գիրք 2, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2018
6. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2018թ.), Գիրք 11, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2019
7. ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ, Հայաստան, 2018, Գիրք 3, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2019
8. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2019թ.), Գիրք 12, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2020
9. «Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), Հայաստան», 2019, Գիրք 4, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, Երևան, 2020
10. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2020թ.), Գիրք 13, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, ՀՖՄ, Երևան, Ասողիկ, 2021
11. CoE, Committee of Ministers (2008), The Strategy for Innovation and Good Governance at Local Level.
12. <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM-EU>
13. <https://tradingeconomics.com/european-union/gdp-per-capita>
14. www.appsso.eurostat.ec.europa.eu
15. www.parliament.am
16. www.gov.am
17. www.arlis.am
18. www.armstat.am
19. www.e-gov.am
20. www.mtad.am
21. www.minfin.am
22. www.yerevan.am
23. www.elections.am
24. www.cfoa.am

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Ստորև ներկայացվում են Աղյուսակներ 1-8-ի բովանդակությունը.

Աղյուսակ 1. Սահմանված գործառույթներն ու ցուցիչներն՝ ըստ ՏԻ բնագավառների

Աղյուսակ 2. Ցուցիչների համապատասխանության ստուգումը պատշաճ կառավարման 12 սկզբունքներին

Աղյուսակներ 3 - 7. Ցուցիչների գնահատումն՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների

Աղյուսակ 8. ՏԻՏԻ հաշվարկումը ՏԻ բնագավառներում՝ ըստ գործառույթների և ցուցիչների գնահատման արդյունքների, 2018թ., 2019թ. և 2020թ. համար

Աղյուսակ 1. ՏԻՏԻ գործառույթներն ու ցուցիչներն՝ ըստ ՏԻ բնագավառների
Տե՛ս ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս, Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, Աղյուսակ 1:

Աղյուսակ 2. ՏԻՏԻ ցուցիչների համապատասխանության ստուգումը տեղական մակարդակում նորարարության և պատշաճ կառավարման 12 սկզբունքներին

Տե՛ս ՀՀ տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս, Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, Աղյուսակ 2:

Աղյուսակներ 3-7. ՏԻՏԻ ցուցիչների գնահատումն՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների
Աղյուսակ 3ա. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*				
Բնագավառի անվանումը. 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ											
Գործառույթի անվանումը. 1.1. Բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատում											
1	Տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը (սահմանադրական դրույթների իրավակիրառության աստիճանը ՀՀ օրենսդրությունում), %	58.0%	6	65.0%	7	65.0%	7	10	Կատարյալ	100%	Հիմք է ընդունվել ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխի մի շարք իրավակարգավորող դրույթների անհամապատասխանությունը օրենսդրական մակարդակում: Այդ դրույթներն են՝ 182-րդ հոդվածի 4-րդ մասը, 186-րդ հոդվածի 1-ին մասը և 188-րդ հոդվածի 1-ին մասը:
								9	Շատ լավ	85 - 100 %	
								8	Լավ	70 - 85 %	
								7	Բավականին լավ	60 - 70 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50 - 60 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40 - 50 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30 - 40 %	
								3	Բավականին վատ	20 - 30 %	
								2	Վատ	10 - 20 %	
								1	Շատ վատ	0 - 10 %	
0	Գոյություն չունի	0%									
2	Տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության համապատասխանությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային (ՏԻԵԽ-ի դրույթների իրավակիրառության աստիճանը ՀՀ օրենսդրությունում), %	69.0%	7	69.0%	7	69.0%	7	10	Կատարյալ	100%	Հիմք է ընդունվել ՏԻԵԽ-ի որոշ իրավակարգավորող դրույթների անհամապատասխանությունը կամ մասնակի համապատասխանությունը ազգային օրենսդրության մակարդակում: Այդ դրույթներն են՝ 5-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների դրույթները:
								9	Շատ լավ	85 - 100 %	
								8	Լավ	70 - 85 %	
								7	Բավականին լավ	60 - 70 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50 - 60 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40 - 50 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30 - 40 %	
								3	Բավականին վատ	20 - 30 %	
								2	Վատ	10 - 20 %	
								1	Շատ վատ	0 - 10 %	
0	Գոյություն չունի	0%									

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը		Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ
		ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*				
3	Տեղական ինքնակառավարման բնագավառում ՀՀ կառավարության հեռանկարային և միջնաժամկետ ծրագրերով նախատեսված պարտավորությունների իրականացման մակարդակը, %	58.0%	6	65.0%	7	62.0%	7	10	Կատարյալ	100%	Հիմք են ընդունվել ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ուղղվածության ծրագիրը, ՀՀ կառավարության ծրագրի 2020թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը և 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը:
								9	Շատ լավ	85 - 100 %	
								8	Լավ	70 - 85 %	
								7	Բավականին լավ	60 - 70 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50 - 60 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40 - 50 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30 - 40 %	
								3	Բավականին վատ	20 - 30 %	
								2	Վատ	10 - 20 %	
								1	Շատ վատ	0 - 10 %	
0	Գոյություն չունի	0%									
4	Տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ՏԿԶՆ տարեկան ծրագրերով նախատեսված ծրագրերի, միջոցառումների իրականացման մակարդակը, %	58.0%	6	66.0%	7	63.0%	7	10	Կատարյալ	100%	Հիմք են ընդունվել ՀՀ կառավարության ծրագրի 2020թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը և 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը: Պետական լիազոր մարմնի կողմից 2020-ին ՀՀ կառավարության հաստատման են ներկայացվել մի շարք օրենսդրական ակտերի նախագծեր:
								9	Շատ լավ	85 - 100 %	
								8	Լավ	70 - 85 %	
								7	Բավականին լավ	60 - 70 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50 - 60 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40 - 50 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30 - 40 %	
								3	Բավականին վատ	20 - 30 %	
								2	Վատ	10 - 20 %	
								1	Շատ վատ	0 - 10 %	
0	Գոյություն չունի	0%									

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*	ՑԱ*	ՑԳ*				
Գործառույթի անվանումը. 1.2. Միջազգային պարտավորությունների կատարում											
5	Տեղական ինքնակառավարման բնագավառում Եվրոպայի խորհրդի, ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման մակարդակը, %	68.0%	7	68.0%	7	68.0%	7	10	Կատարյալ	100%	Հիմք է ընդունվել «Հայաստանում ՏԻԵԽ-ի մոնիտորինգային զեկույցի և հանձնարարականների նախագիծը» փաստաթուղթը: Ձեկուցողներն արձանագրել են մի շարք խնդիրներ՝ կապված համայնքների միավորման գործընթացում համայնքների հետ խորհրդակցման՝ օրենքով երաշխավորված, կանոնավոր, հստակ և թափանցիկ գործընթացի բացակայության, ինչպես նաև ՏԻՄ-երի լիազորությունների նեղ շրջանակի և ոչ բավարար ֆինանսական ռեսուրսների, լիազորությունները բաշխելիս սուբսիդիարության սկզբունքի պահպանման, վարչական վերահսկողության լայն շրջանակի հետ:
								9	Շատ լավ	85 - 100 %	
								8	Լավ	70 - 85 %	
								7	Բավականին լավ	60 - 70 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50 - 60 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40 - 50 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30 - 40 %	
								3	Բավականին վատ	20 - 30 %	
								2	Վատ	10 - 20 %	
								1	Շատ վատ	0 - 10 %	
							0	Գոյություն չունի	0%		

* **Նշում.** Այսպես է հաշորդող աղյուսակներում ՑԱ = ցուցիչի արժեքը, ՑԳ = ցուցիչի գնահատականը:

Աղյուսակ 3բ. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
Բնագավառի անվանումը. 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ											
Գործառույթի անվանումը. 1.3. Վարչարարածքային բարեփոխումներ											
6	ՀՀ մեկ համայնքի (առանց Երևանի) բնակչության միջին թիվը, մարդ	3760	5	3744	5	3883	5	10	Կատարյալ	16001-ից 19000 մարդ	2019թ-ի հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ բնակչությունը՝ առանց Երևան քաղաքի, 1883.5 հազ. մարդ է եղել, 2020թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 1875.2 հազ. մարդ, 2021թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 1871.6 հազ. մարդ: 2018-ին ՀՀ-ում եղել է 502 համայնք, նույնը նաև 2019 թվականին: 2020թ-ին համայնքները 483-ն են եղել: Հետևաբար, առանց Երևանի, ՀՀ մեկ համայնքի բնակչության միջին թիվը կազմում է՝ 2018թ-ի համար՝ 1883.5 հազ. մարդ/501 = 3760 մարդ, 2019թ-ի համար՝ 1875.2 հազ. մարդ/501 = 3743 մարդ, 2020թ-ի համար՝ 1871.6 հազ. մարդ/482 = 3883 մարդ Աղբյուրը՝ armstat.am
								9	Շատ լավ	12001-ից 16000 մարդ / 19001 -ից 23000 մարդ	
								8	Լավ	8201-ից 12000 մարդ / 23001-ից 26000 մարդ	
								7	Բավականին լավ	5601-ից 8200 մարդ / 26001-ից 29000 մարդ	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	4201-ից 5600 մարդ / 29001-ից 35000 մարդ	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	3001-ից 4200 մարդ / 35001-ից 42000 մարդ	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	2101-ից 3000 մարդ / 42001-ից 50000 մարդ	
								3	Բավականին վատ	1501-ից 2100 մարդ / 50001-ից ավելի մարդ	
								2	Վատ	1001-ից 1500 մարդ	
								1	Շատ վատ	1000-ից քիչ	
	0	Գոյություն չունի	0								

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020			Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
7	ՀՀ մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը, կմ²	56.7	5	56.7	5	58.9	5	10	Կատարյալ	270.01-ից 330 կմ²	ՀՀ տարածքը, առանց Սևանա լճի, 28467 քառ. կմ է: 2018-2019 թթ-ին ՀՀ-ում եղել է 502 համայնք, 2020թ-ին՝ 483 համայնք: Հետևաբար, ՀՀ մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը՝ 2018-2019թթ-ին՝ 28467 քառ.կմ / 502 = 56.7 քառ. կմ 2020թ-ին՝ 28467 քառ.կմ / 483 = 58.9 քառ. կմ Աղբյուրը՝ armstat.am
								9	Շատ լավ	200.01-ից 270 կմ² / 330.01-ից 400կմ²	
								8	Լավ	140.01-ից 200 կմ² / 400.01-ից 510 կմ²	
								7	Բավականին լավ	90.01-ից 140 կմ² / 510.01-ից 670 կմ²	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	60.01-ից 90 կմ² / 670.01-ից 880 կմ²	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40.01-ից 60կմ² / 880.01-ից 1150 կմ²	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	20.01-ից 40 կմ² / 1150.01-ից 1500 կմ²	
								3	Բավականին վատ	10.01-ից 20 կմ² / 1500.01 կմ²-ից մեծ	
								2	Վատ	3.01-ից 10 կմ²	
								1	Շատ վատ	3 կմ²-ից փոքր	
0	Գոյություն չունի	0									
Գործառույթի անվանումը. 1.4. Միջհամայնքային համագործակցություն											
8	Միջհամայնքային համագործակցության կառույցներում ընդգրկված համայնքների տեսակարար կշիռը ՀՀ համայնքների ընդհանուր թվի մեջ, %	35.3%	4	20.7%	3	20.7%	3	10	Կատարյալ	Բարձր է 90%-ից	2018-2019թթ-ին միջհամայնքային համագործակցության կառույց-ներում ընդգրկված են եղել 104 համայնք, 2020թ-ին՝ 92 համայնք: 2018-2019թթ-ին ՀՀ-ում եղել է 502 համայնք, 2020թ-ին՝ 483 համայնք: Հետևաբար, ՄՀԿ-ներում ընդգրկված համայնքների տեսակարար կշիռը կլինի՝ 2018-2019թթ-ի համար՝ 104 / 502 * 100% = 20.7% 2020թ-ի համար՝ 92 / 483 * 100% = 19.0% Աղբյուրը՝ ՀՀ ՏԿԵՆ
								9	Շատ լավ	80-ից 90%	
								8	Լավ	70-ից 80%	
								7	Բավականին լավ	60-ից 70%	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50-ից 60%	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40-ից 50%	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30-ից 40%	
								3	Բավականին վատ	20-ից 30%	
								2	Վատ	10-ից 20%	
								1	Շատ վատ	0-ից 10%	
0	Գոյություն չունի	0%									

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատման չափանիշների մեկնաբանությունը, հիմնավորումներ
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ			
9	Կամավոր հիմունքներով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը, համայնք	0	0	0	0	0	0	10 Կատարյալ	18-ից ավելի համայնք	Ցուցիչի գնահատման չափանիշների ընտրությունը մեծապես կախված է վարչատարածքային բարեփոխումներից: Վերջինիս ավարտից հետո հստակորեն կձևակերպվի գնահատման չափանիշների սանդղակը: 2018-2020 թվականներին կամավոր սկզբունքով միջհամայնքային միավորումներ չեն ձևավորվել:
								9 Շատ լավ	17-ից 18 համայնք	
								8 Լավ	15-ից 16 համայնք	
								7 Բավականին լավ	13-ից 14 համայնք	
								6 Ավելի շատ լավ, քան վատ	11-ից 12 համայնք	
								5 Միջին՝ ոչ լավ ոչ վատ	9-ից 10 համայնք	
								4 Ավելի շատ վատ, քան լավ	7-ից 8 համայնք	
								3 Բավականին վատ	5-ից 6 համայնք	
								2 Վատ	3-ից 4 համայնք	
								1 Շատ վատ	2 համայնք	
								0 Գոյություն չունի	0-ից 1 համայնք	
10	Օրենքով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը	0	0	0	0	0	0	10 Կատարյալ	18-ից ավելի համայնք	Ցուցիչի գնահատման չափանիշների ընտրությունը մեծապես կախված է վարչատարածքային բարեփոխումներից: Վերջինիս ավարտից հետո հստակորեն կձևակերպվի գնահատման չափանիշների սանդղակը: 2018-2020 թվականներին օրենքով միջհամայնքային միավորումներ չեն ձևավորվել:
								9 Շատ լավ	17-ից 18 համայնք	
								8 Լավ	15-ից 16 համայնք	
								7 Բավականին լավ	13-ից 14 համայնք	
								6 Ավելի շատ լավ, քան վատ	11-ից 12 համայնք	
								5 Միջին՝ ոչ լավ ոչ վատ	9-ից 10 համայնք	
								4 Ավելի շատ վատ, քան լավ	7-ից 8 համայնք	
								3 Բավականին վատ	5-ից 6 համայնք	
								2 Վատ	3-ից 4 համայնք	
								1 Շատ վատ	2 համայնք	
								0 Գոյություն չունի	0-ից 1 համայնք	

Աղյուսակ 4ա. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
Բնագավառի անվանումը. II. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ											
Գործառույթի անվանումը. II.1. Համայնքի սեփականության գույք											
11	ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, %	11.9%	3	19.5%	4	26.9%	4	10	Կատարյալ	> 45.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Q = U / P \times 100\%$, որտեղ՝ 2018-ի համար՝ $U=14,048,602.3$ հազ. դրամ, $P=118,386,120.4$ հազ. դրամ, 2019-ի համար՝ $U=25,916,517.0$ հազ. դրամ, $P=132,895,904.5$ հազ. դրամ, 2020-ի համար՝ $U=37,178,887.6$ հազ. դրամ, $P=138,352,658.8$ հազ. դրամ:
								9	Շատ լավ	40.1 - 45.0 %	
								8	Լավ	35.1 - 40.0 %	
								7	Բավականին լավ	30.1 - 35.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	25.1 - 30.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	20.1 - 25.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	15.1 - 20.0 %	
								3	Բավականին վատ	10.1 - 15.0 %	
								2	Վատ	5.1 - 10.0 %	
								1	Շատ վատ	0.1 - 5.0 %	
0	Գոյություն չունի	0%									
12	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, %	18.4%	4	27.9%	6	37.9%	8	10	Կատարյալ	> 45.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am, www.yerevan.am : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Q = U / P \times 100\%$, որտեղ՝ 2018-ի համար՝ $U=10,217,076.3$ հազ. դրամ, $P=55,577,281.2$ հազ. դրամ, 2019-ի համար՝ $U=18,467,827.7$ հազ. դրամ, $P=66,135,119.5$ հազ. դրամ, 2020-ի համար՝ $U=28,061,077.3$ հազ. դրամ, $P=74,051,833.2$ հազ. դրամ:
								9	Շատ լավ	40.1 - 45.0 %	
								8	Լավ	35.1 - 40.0 %	
								7	Բավականին լավ	30.1 - 35.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	25.1 - 30.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	20.1 - 25.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	15.1 - 20.0 %	
								3	Բավականին վատ	10.1 - 15.0 %	
								2	Վատ	5.1 - 10.0 %	
								1	Շատ վատ	0.1 - 5.0 %	
0	Գոյություն չունի	0%									

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
Գործառույթի անվանումը. II.2. Համայնքի զարգացման ծրագիր և բյուջե (բյուջեդավարում և պլանավորում)											
-											
Գործառույթի անվանումը. II.3. Համայնքի բյուջեդային եկամուտներ											
13	ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ համախմբված բյուջեի ընդհանուր եկամուտներում, %	9.2%	3	8.9%	3	9.7%	3	10	Կատարյալ	> 25.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքների միջինը 2015թ. տվյալներով կազմում է մոտ 24.8 %), http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = Ա / Բ \times 100\%$, որտեղ 2018-ի համար՝ Ա=127.5 մլրդ. դրամ, Բ=1,384.5 մլրդ. դրամ, 2019-ի համար՝ Ա= 144.5 մլրդ. դրամ, Բ=1,614.9 մլրդ. դրամ, 2020-ի համար՝ Ա=156.1 մլրդ.դրամ, Բ=1,608.7 մլրդ. դրամ:
								9	Շատ լավ	22.6 - 25.0 %	
								8	Լավ	20.1 - 22.5 %	
								7	Բավականին լավ	17.6 - 20.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	15.1 - 17.5 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	12.6 - 15.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	10.1 - 12.5 %	
								3	Բավականին վատ	7.6 - 10.0 %	
								2	Վատ	5.1 - 7.5 %	
								1	Շատ վատ	0.1 - 5.0 %	
	Գոյություն չունի	0%									
14	ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	92.7%	7	93.1%	7	101.0%	10	10	Կատարյալ	> 100.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2017-2019թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = Ա / Բ \times 100$, որտեղ 2017-ի համար՝ Ա=126,554,009.6 հազ. դրամ, Բ=136,557,862.6 հազ. դրամ, 2018-ի համար՝ Ա=127,474,811.4 հազ. դրամ, Բ=136,987,574.9 հազ. դրամ, 2019-ի համար՝ Ա=144,463,370.9 հազ. դրամ, Բ=143,102,061.5 հազ. դրամ:
								9	Շատ լավ	97.1 - 100.0 %	
								8	Լավ	94.1 - 97.0 %	
								7	Բավականին լավ	91.1 - 94.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	88.1 - 91.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	85.1 - 88.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	82.1 - 85.0 %	
								3	Բավականին վատ	79.1 - 82.0 %	
								2	Վատ	76.1 - 79.0 %	
								1	Շատ վատ	< 76.0 %	
	Գոյություն չունի	0%									

№	Ցուցիչի անվանումը	2017		2018		2019		Գնահատման սանդղակը		Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումները
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
15	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	103.5%	10	115.7%	10	123.8%	10	10	Կատարյալ	> 100.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am , www.armstat.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքը 2015թ. տվյալներով կազմում է մոտ \$ 3528: ՀՀ-ի և ԵՄ երկրների ՀՆԱ-ների համադրելիության ինդեքսը կազմում է մոտ 11.25 %: Հաշվարկ՝ $\$3528 * 11.25\% / 100\% = \397 , http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ=Ա / Բ / Դ$, որտեղ 2018-ի համար՝ $Ա=127.5$ մլրդ. դրամ, $Բ=2,965.1$ հազ. մարդ, $Դ=483$ դրամ, 2019-ի համար՝ $Ա=144.5$ մլրդ. դրամ, $Բ=2959.2$ հազ. մարդ, $Դ=480$ դրամ, 2020-ի համար՝ $Ա=156.1$ մլրդ. դրամ, $Բ=2,963.3$ հազ. մարդ, $Դ=489$ դրամ:
								9	Շատ լավ	97.1 - 100.0 %	
								8	Լավ	94.1 - 97.0 %	
								7	Բավականին լավ	91.1 - 94.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	88.1 - 91.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	85.1 - 88.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	82.1 - 85.0 %	
								3	Բավականին վատ	79.1 - 82.0 %	
								2	Վատ	76.1 - 79.0 %	
								1	Շատ վատ	< 76.0 %	
								0	Գոյություն չունի	0%	
16	ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	89.0	2	101.7	3	107.7	3	10	Կատարյալ	> \$ 400	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2017-2019թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am , www.armstat.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքը 2015թ. տվյալներով կազմում է մոտ \$ 3528: ՀՀ-ի և ԵՄ երկրների ՀՆԱ-ների համադրելիության ինդեքսը կազմում է մոտ 11.25 %: Հաշվարկ՝ $\$3528 * 11.25\% / 100\% = \397 , http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ=Ա / Բ / Դ$, որտեղ 2017-ի համար՝ $Ա=126.6$ մլրդ. դրամ, $Բ=2,972.9$ հազ. մարդ, $Դ=481$ դրամ, 2018-ի համար՝ $Ա=127.5$ մլրդ. դրամ, $Բ=2,965.1$ հազ. մարդ, $Դ=483$ դրամ, 2019-ի համար՝ $Ա=144.5$ մլրդ. դրամ, $Բ=2959.7$ հազ. մարդ, $Դ=480$ դրամ:
								9	Շատ լավ	\$361 - \$400	
								8	Լավ	\$316 - \$360	
								7	Բավականին լավ	\$271 - \$315	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	\$226 - \$270	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	\$181 - \$225	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	\$136 - \$180	
								3	Բավականին վատ	\$91 - \$135	
								2	Վատ	\$46 - \$90	
								1	Շատ վատ	\$01 - \$45	
								0	Գոյություն չունի	\$0	

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը		Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
17	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	64.6	2	77.1	2	90.4	2	10	Կատարյալ	> \$ 400	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am, www.yerevan.am, www.armstat.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքը 2015թ. տվյալներով կազմում է մոտ \$ 3528: ՀՀ-ի և ԵՄ երկրների ՀՆԱ-ների համադրելիության ինդեքսը կազմում է մոտ 11.25 %: Հաշվարկ՝ \$3528 * 11.25% / 100% = \$397, http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = \frac{Ա}{Բ} \cdot Դ$, որտեղ 2018-ի համար՝ Ա=58.8 մլրդ. դրամ, Բ=1,885.0 հազ. մարդ, Դ=483 դրամ, 2019-ի համար՝ Ա=69.4 մլրդ. դրամ, Բ=1,875.2 հազ. մարդ, Դ=480 դրամ, 2020-ի համար՝ Ա=82.8 մլրդ. դրամ, Բ=1,871.6 հազ. մարդ, Դ=489 դրամ:
								9	Շատ լավ	\$361 - \$400	
								8	Լավ	\$316 - \$360	
								7	Բավականին լավ	\$271 - \$315	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	\$226 - \$270	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	\$181 - \$225	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	\$136 - \$180	
								3	Բավականին վատ	\$91 - \$135	
								2	Վատ	\$46 - \$90	
								1	Շատ վատ	\$01 - \$45	
								0	Գոյություն չունի	\$0	
18	ՀՀ համայնքների բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը)	33.3%	4	33.6%	4	29.6%	3	10	Կատարյալ	90.1 - 100.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = \frac{Ա}{Բ} \times 100\%$, որտեղ 2018-ի համար՝ Ա=42,390.5 մլն. դրամ, Բ=127,474.8 մլն. դրամ, 2019-ի համար՝ Ա=48,567.7 մլն. դրամ, Բ=144,463.4 մլն. դրամ, 2020-ի համար՝ Ա=46,256.3 մլն. դրամ, Բ=156,136.6 մլն. դրամ:
								9	Շատ լավ	80.1 - 90.0 %	
								8	Լավ	70.1 - 80.0 %	
								7	Բավականին լավ	60.1 - 70.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	50.1 - 60.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	40.1 - 50.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	30.1 - 40.0 %	
								3	Բավականին վատ	20.1 - 30.0 %	
								2	Վատ	10.1 - 20.0 %	
								1	Շատ վատ	0.1 - 10.0 %	
								0	Գոյություն չունի	0%	

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
Գործառույթի անվանումը. II. 4. Փոխառու միջոցներ (Պարբերի կառավարում)											
19	ՀՀ համայնքների բյուջեների փոխառությունների տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում, %	0.0%	0	0.0%	0	0.0%	0	10	Կատարյալ	5.1 - 6.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքների միջինը 2015թ. տվյալներով կազմում է մոտ 5.1%, http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = Ա / Բ \times 100\%$, որտեղ 2018-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=129,349.9 մլն. դրամ, 2019-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=146,933.3 մլն. դրամ, 2020-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=156,136.6 մլն. դրամ:
								9	Շատ լավ	4.1 - 5.0 %	
								8	Լավ	3.6 - 4.0 %	
								7	Բավականին լավ	3.1 - 3.5 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	2.6 - 3.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	2.1 - 2.5 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	1.6 - 2.0 %	
								3	Բավականին վատ	1.1 - 1.5 %	
								2	Վատ	0.6 - 1.0 %	
								1	Շատ վատ	0.1 - 0.5 %	
	Գոյություն չունի	0%									
20	ՀՀ համայնքների բյուջեների վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում, %	0.0%	0	0.0%	0	0.0%	0	10	Կատարյալ	24.1 - 27.0 %	Տեղեկատվության աղբյուրը՝ համայնքների 2018-2020թթ. բյուջեների ամփոփ տվյալներ, www.minfin.am : ԵՄ անդամ երկրների նույն ցուցիչի արժեքների միջինը 2015թ. տվյալներով կազմում է մոտ 26.5%, http://appsso.eurostat.ec.europa.eu : Հաշվարկման մեկնաբանությունը՝ $Գ = Ա / Բ \times 100\%$, որտեղ 2018-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=129,349.9 մլն. դրամ, 2019-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=146,933.3 մլն. դրամ, 2020-ի համար՝ Ա=0.0 մլն. դրամ, Բ=156,136.6 մլն. դրամ:
								9	Շատ լավ	21.1 - 24.0 %	
								8	Լավ	18.1 - 21.0 %	
								7	Բավականին լավ	15.1 - 18.0 %	
								6	Ավելի շատ լավ, քան վատ	12.1 - 15.0 %	
								5	Միջին՝ ոչ լավ ոչ վատ	9.1 - 12.0 %	
								4	Ավելի շատ վատ, քան լավ	6.1 - 9.0 %	
								3	Բավականին վատ	4.1 - 6.0 %	
								2	Վատ	2.1 - 4.0 %	
								1	Շատ վատ	0.1 - 2.0 %	
	Գոյություն չունի	0%									

Աղյուսակ 4բ. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ

№	Ցուցիչի անվանումը	2018		2019		2020		Գնահատման սանդղակը	Ցուցիչի գնահատման չափանիշները	Ցուցիչի գնահատականի մեկնաբանությունը, հիմնավորումներ	
		ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ	ՑԱ	ՑԳ				
Բնագավառի անվանումը. II. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ											
Գործառույթի անվանումը. II.5. ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն											
